ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՈՉ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ

Պատերազմի վախճանը իր հետ բերավ շատ մը բարդ և կնճռոտ հարցեր՝ անոր արհավիրքեն ազատված մեծ ու փոքր ազգերու համար։ Ամեն ազգ իր ֆիզիքական ու նյութական ուժի բոլոր աղբյուրները գործի կդնե բուժելու իր վերքերը, վերաշինելու իր քանդված գյուղերն ու քաղաքները, և վերականգնելու իր խորտակված տուներն ու գործարանները։

Մենք հայերս ալ պետք ունինք քննելու մեր ներկա դիրքը և նկատի առնելու պատերազմի ստեղծած նոր կացությունն ու պայմանները։ Նախորդ պատերազմի վախճանին գտանք թրքահայությունն բնաջնջումի եզրը հասած, անոր կեսը ջարդված և հալածված, և մնացյալ կեսը իր տունեն և օճախեն վտարված և ցրված աշխարհի չորս անկյունները։

Մինակ Ռուսական Հայաստանը բախտավոր գտնվեցավ ազատելու բնաջնջումի վըտանգեն երբ ան միացավ Սովետական Հանրապետություններուն Միության, իբր հավասար մեկ անդամ։ Եվ 26 տարիներու ընթացքին Խորհրդային Հայաստանի ժողովուրդը ստեղծեց ապահով և երջանիկ կյանք մը՝ շնորհիվ իր ստեղծագործ և նախաձեռնող ոգիին, և իբր արդյունք Հայկական Հանրապետության Սովետական Միության անդամակցության։

Վերածնող Մայր Հայրենիքի վերելքին լավագույն չափով օգնելու և արտասահմանի հայոց բարօրության, ներգաղթի, և հողային արդար իրավունքներու վերստացումին օգտին կատարված աշխատանքները ներդաշնակելու և համադրելու համար Ամերիկահայ Ազգային Խորհուրդ նախաձեռնած է Համաշխարհային Հայկական Քոնկրես մը գումարել։

1. — ՏԵՂ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ

Քոնկրեսը պիտի բացվի Նյու-Յորքի Ուալտորֆ Ասթորիա պանդոկին մեջ, ապրիլ 30-ի երեկոյան՝ շքեղ ճաշկերույթով մը։ Մայիս 1, 2, 3 տեղի պիտի ունենան ժողովներ նույն պանդոկի մեջ և մայիս 4-ին Քոնկրեսը պիտի փակվի հսկա հրապարակային ժողովով մը, որ պիտի կատարվի Քարնեկի հոլի մեջ։

2. - ՔՈՆԿՐԵՍԻ ՀԱՐՑԵՐԸ

Քոնկրեսը իրավասություն ունի պատրաստելու իր օրակարգը և զբաղելու այն բոլոր հարցերով, որ ինքը հարմար կտեսնե։

Խորհուրդս կթելադրե Քոնկրեսին՝ օրակարգի հետևյալ հարցերը.—

Ա.— Միություն և համագործակցություն ստեղծել բոլոր հայ գաղութներու մեջ ներգաղթի և վերաշինության շուրջ։

Բ.— Հասարակաց նպաստավոր կարծիք ստեղծել Հայ հողային իրավունքներու նըկատմամբ և անոնց արդար լուծումը հետապնդել Միացյալ Ազգերու միջոցավ։

Գ.— Մշակութային և հոգևկան կապերը զորացնել գաղութներու և Մայր Հայրենիքի միջև։

Դ.— Հայտնաբերել հայ գաղութներու հավատարմությունը և ծառայությունը իրենց բնակած երկիրներու կառավարություններուն։

Ե.— Միջոցներ ստեղծել Քոնկրեսի որոշումները գործադրության դնելու։

3. — ՔՈՆԿՐԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Թեև Ամերիկահայ Ազգային Խորհուրդս նախաձեռնած է կանչել այս համագումարը, սակայն ան զայն սեփականությունը կդարձնե հայ ժողովուրդին։

Անոր մասնակցելու և պատգամավորներ ընտրելու իրավասություն ունին Ամերիկայի և արտասահմանի հայ գաղութներու բոլոր այն կազմակերպությունները, որոնք ապա-

ցուցած են իրենց անկեղծ հայրենասիրությունը և նվիրումը Մայր Հայրենիքին հառաջդիմության սրբազան գործին։

Այս Քոնկրեսին պատգամավոր ղրկելու իրավունք ունին ամեն քաղաքական, եկեղեցական, բարեգործական, հայրենակցական, արհեստակցական, կրթական, երիտասարդական, վերերաններու կազմակերպությունները։ Ամեն կազմակերպության մեն մի մասնաճյուղ կրնա ընտրել մեկ պատգամավոր, իսկ հինգ և ավելի մասնաճյուղ ունեցող կեդրոնական մարմիններ կրնան ընտրել երեք պատգամավորներ իրենց կողմանե։

Այս պատգամավորները պետք է ընտրվին և իրենց վկայագիրներն ղրկվին Քոնկրեսի կեդրոնական գրասենյակը ապրիլ 15-են առաջ։

Քոնկրեսին մասնակցելու պիտի հրավիրվին նաև ակտավոր դեմքեր և հանրային կյանքով հետաքրքրվող հայրենասեր մտավորական և առևտրական ազդայիններ։

Արդ, սիրելի հայրենակիցնե՛ր, կոչ կենք ամեն ողջմիտ և հայրենասեր հայու զորավիգ կանգնիլ մեզի, պատմության այս բախտորոշ օրերուն գումարվելիք այս Համաշխարհային Հայկական Քոնկրեսին հաջողության համար։ Այս Քոնկրեսը կոչված է կարևոր դեր մը կատարել հայ կյանքի մեջ, այն է հարթել գաղութներու մեջ գոյություն ունեցող դժվարությունները և ստեղծել միացյալ գործունեություն հօգուտ հայ ժողովուրդի բարօրության և անոր հողային պահանջներուն արդար լուծման։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Ատենապետ՝ ՆՇԱՆ ՇԱՀԻՆՅԱՆ
Փոխ-ատենապետ՝ ՄԱՐՏԻԿ ՄԱՐՏԵՆՑ
Քարտուղար՝ ՍԵԴՐԱԿ ՇԱՀԵՆ
Գանձապահ՝ ՄԵՍՐՈՊ ՊԱՃԱԳՅԱՆ

Նյու-Յորք
22 փետրվարի 1947 թ.
Քոնկրեսի Կեդրոնական գրասենյակ